ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունիսի 2026 թվականի N 1114

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՇՏԱՊ ԵՐԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցչի իրազեկումը, ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով, 20-րդ հոդվածի 3-րդ մասով, 21-րդ և 22-րդ հոդվածներով, 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝ ***որոշում եմ.***

1. «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի կողմից 2026 թվականի հունիսի 05-ին ժամը 17:00-ից մինչև 20:00-ն ընկած ժամանակահատվածում, Տիգրան Մեծ 2 հասցեում գտնվող Շառլ Ազնավուրի անվան մշակույթի տան պալատից և Տիգրան Մեծի պողոտայով դեպի Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան, այնուհետև Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի, հանրային շտապ երթի անցկացման վերաբերյալ իրազեկումն ընդունել ի գիտություն և համաձայն ոստիկանության 05.06.2026թ. թիվ 5812-1383 գրության պահպանել նշված փողոցներում միակողմանի երթևեկություն:

2. Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին համայնքի ղեկավարի որոշման մասին անհապաղ տեղեկացնել կազմակերպիչներին և ոստիկանությանը, ինչպես նաև համապատասխան որոշումը փակցնել համայնքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի և տեսանելի տեղում: Որոշումը տեղադրել նաև vanadzor.am համացանցային կայք էջում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

Ճիշտ է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՆԻ ԱՎԵՐԻԲՅԱՆ